



Կարգապահական գործ թիվ 19239

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020թ-ի հուլիսի 14-ի թիվ 81-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/68-Ա**

**ՓԱՍՏԱՔԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բարայանի, Գայանե Դեմիրջյանի և Արայիկ Ղազարյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,
քննության առնելով փաստաբան Ռուբեն Սահակյանի (արտոնագիր՝ թիվ 13), (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

14.11.2019թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը ներկայացրել է զեկուցագիր, որի համաձայն՝ 07.11.2019 թվականին www.youtube.com կայքում հրապարակվել է տեսանյութ¹, որտեղ փաստաբան Ռուբեն Սահակյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող**), ճեպագրույցի ընթացքում խոսելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի մասին, արտաբերել է հետևյալ միտքը. «Նա չի տիրապետում իր մասնագիտությանը: Նախորդ նիստում չհասկացավ, թե ինչի մասին եմ խոսում և ասաց՝ «կարճ կապեր»... եթե չես հասկանում, ինչո՞ւ կարճ կապեմ, գնա ձեր տուն, կատուներին դատապարտի: Քո կատուների գործը լսի, ոչ թե մարդկանց ... դե, նա շատ կատուներ է պահում»:

Միաժամանակ, զեկուցագրում նշվել է, որ նույն օրը Պալատը www.1in.am և www.4rd.am կայքերի լրագրողներից կողմից ստացվել է բանավոր հարցում, թե արդյոք

¹ <https://www.youtube.com/watch?v=v5LiHmSWcyA&t=130s>

Պալատը չի պատրաստվում կարգապահական վարույթ հարուցել դատավոր Աննա Դանիբեկյանին ուղղված փաստաբանի հրապարակային արտահայտությունների հիմքով: Նշված կայքերը իրենց հրապարակումներով անդրադարձել են դատավորի հասցեին ուղղված վերը նշված խոսքին²:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 21.12.2019թ. թիվ 480-Ա/ԿԳ-19239 որոշմամբ փաստաբան Ռուբեն Սահակյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ.-ի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Հունան Բաբայանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Սույն կարգապահական գործը հարուցվել է զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանող Ռուբեն Սահակյանից դիմումի վերաբերյալ պահանջվել է գրավոր բացատրություն, սակայն Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն էտրիորդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 29.01.2020թ-ին կազմել է եզրակացություն:

² <https://www.1in.am/2653818.html> , http://4rd.am/news/harcy_chi_qnnarkvel_patabanneri_palat/2019-11-07-601?fbclid=IwAR1q_dGFEimeDHG1DSZCZYICsap50m1BI-yG99yE5AFwj2ymoz4goG6klzw

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություններ չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 29.01.2020թ.-ին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 03.03.2020թ. ժամը 18:30-ին և 14.07.2020թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-L որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Պատասխանող Ռուբեն Սահակյանը, ճեպագրույցի ընթացքում խոսելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի մասին, արտաբերել է հետևյալ միտքը. «Նա չի փրկապետում իր մասնագիտությանը: Նախորդ նիստում չհասկացավ, թե ինչի մասին եմ խոսում և ասաց՝ «կարճ կապեք»... եթե չես հասկանում, ինչո՞ւ կարճ կապեմ, գնա ձեր տուն, կատուներին դատապարտի: Քո կատուների գործը լսի, ոչ թե մարդկանց ... դե, նա շատ կատուներ է պահում»: Նշված փաստը հաստատվում է «Youtube» կայքից կատարված քաղվածքով (հղում՝ <https://www.youtube.com/watch?v=v5LiHmSWcyA&t=130s>)

- Փաստաբան Ռուբեն Սահակյանը պատասխանելով զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հարցին հայտնել է հետևյալը. «Գիտեք, ի՞նչ, գուցե չպետք է օգտագործեի այդ բառերը, բայց որ նա արժանի էր նախատինքին, դրանում կասկած չկա: **Ես նրան պատասխանել եմ իր վարքագծի համար, որը չպետք է անեի**»: Սույն փաստը հաստատվում է www.panorama.am/am կայքում 21.11.2019թ. կատարված հրապարակմամբ:

6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ռուբեն Սահակյանը փաստաբան է հանդիսանում 29.03.1985թ-ից, և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Ռուբեն Սահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Վերը նշված կանոնը կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանը այնպիսի վարքագիծ է դրսևորում, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Սույն գործի փաստերից բխում է, որ փաստաբան Ռուբեն Սահակյանը դատավորի կողմից թույլ տված «կարճ կապեք» արտահայտության վերաբերյալ արտահայտվել է հետևյալ կերպ. «Նա չի տիրապետում իր մասնագիտությանը: Նախորդ նիստում չհասկացավ, թե ինչի մասին եմ խոսում և ասաց՝ «կարճ կապեք»... եթե չես հասկանում, ինչո՞ւ կարճ կապեմ, գնա ձեր տուն, կատուներին դատապարտի: Քո կատուների գործը լսի, ոչ թե մարդկանց ... դե, նա շատ կատուներ է պահում»:

Խորհուրդը փաստաբանի վերը նշված վարքագիծը քննարկելիս էական է համարում հետևյալ հանգամանքները՝

Ա. Դատարանը չի դիմել ՀՀ փաստաբանների պալատ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրանքով:

Բ. Փաստաբանը ըստ էության զանգվածային լրատվամիջոցներով հայտնել է, որ «Ես նրան պատասխանել եմ իր վարքագծի համար, որը չպետք է անել»:

Գ. Փաստաբանը հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի առաջին նախագահը, ում նկատմամբ նախկինում որևէ կարգապահական վարույթ հարուցված չի եղել:

Վերը նշված հանգամանքների հաշվառմամբ Խորհուրդն հաստատված է համարում, որ փաստաբան Ռուբեն Սահակյանը միտում չի ունեցել վիրավորելու կամ անհարգալից վարքագիծ դրսևորելու դատարանի հանդեպ, իսկ թույլ տված Խորհրդի գնահատմամբ զգացմունքային արտահայտության վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով հայտնել է, որ չպետք է նման կերպ արտահայտվեր:

Բացի այդ, Խորհուրդը կարևորում է այն հանգամանքը, որ դատարանը չի դիմել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրանքով Պալատ, ինչը Ռուբեն Սահակյանի կողմից www.panorama.am/am կայքում 21.11.2019թ. ներկայացված խոսքերի համատեքստում, կարող է գնահատվել նաև, որ դատավորը նույնպես Ռուբեն Սահակյանի վարքագծում Կանոնագրքի պահանջի խախտում չի տեսել:

Խորհուրդը հաշվի է առնում նաև, որ փաստաբան Ռուբեն Սահակյանը 2005-2013թթ. ժամանակահատվածում եղել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, երբևէ կարգապահական տույժի չի ենթարկվել:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռուբեն Սահակյանի վարքագծում բացակայում են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Պալատի կանոնադրության 16.26-րդ կետի և Կարգի 6.1.1 (2) ենթակետի պահանջներով, Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Փաստաբան Ռուբեն Սահակյանի նկատմամբ հարուցված թիվ 480-Ա/ԿԳ-19239 կարգապահական վարույթը կարճել:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Տիգրան Խուրշուդյան

**14 հուլիսի, 2020թ.
թիվ ԿԳ/68-Ա
ք. Երևան**